

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ

Աստուծո ողորմությամբ վերստին վիճակվում է Մեզ մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի հրաշալի ծնունդը ավետել Ամենայն Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Թող Սուրբ Ծննդյան շնորհները առատապես իջնեն մեր եկեղեցիների և մեր հավատավոր ժողովրդի վրա ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, որպեսզի երկնառաք այդ շնորհներով առավել լուսավորվի կյանքի ճանապարհը մեր ազգի զավակների, որոնք, մանավանդ մեր մայր հայրենիքում տագնապալի այս օրերին, իրենց հոգու հայացքը հառած դեպի երկինք, աղոթում են, որ հնչի ժամը իրենց արդար ապասումների իրականացման:

Չի հավատում ենք, թե բարձրյալն Աստված յուր միածին Որդվո շնորհներով «Արար զօրութիւն բազկաւ իւրով ... քակեաց զհզօրս յաթոռոց և բարձրացոյց զխոնարհս: Զքաղցեալս լցոյց բարութեամբ և մեծատունս արձակեաց ունայնս» (Ղուկ. Ա. 51—53):

Սուրբ Ծննդյան տոների առթիվ Միածնաէջ Մայր տաճարից հղում ենք Մեր սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը Ձերդ Սրբազնության, տիրախնամ թեմիդ հոգևոր դասուն ու վարչական մարմիններին և համայն հավատացյալ մեր ժողովրդին:

«Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն», ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ

մեր Ընդհանրական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից Հայաստանյայց Եկեղեցու Ընդհանրական երեք Աթոռներին, թեմական բոլոր առաջնորդներին և եկեղեցական համայնքներին ուղղվեց նաև հետևյալ ողջույնի հեռագիրը.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց» Հայոց աշխարհի Միածնաէջ Սուրբ Սեղանից:

Մեծ ուրախությամբ ողջունում ենք Ձեզ մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի Հարության հրաշալի ավետիսով, որ լույս է սփռում մեր բոլորիս կյանքի ճանապարհին, մեր խոհերին ու մեր ձեռաց գործերին, առավել ամրապնդելով մեր հոգիներում «զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս առաքինութեան»:

Սուրբ Հարության կենարար շնորհները թող առատապես բաշխվեն նաև Ձեր տիրախնամ թեմի տարածքի վրա, Ձերդ Սրբազնության, ձեր եկեղեցյաց հոգևոր սպասավորներին, թեմական և համայնքային խորհուրդներին և համայն հավատացյալ Մեր զավակներին:

Հայրական սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին ամենաջերմ և հարգալից զգացմունքներով զեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ մեր Ընդհանրական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: